

ԱՅՈՑ ԼԵՂՎԻ «ՇՐՋՈՒՆ ԲԱՌԱՐԱՆԸ» ԿԱՄ «ՀԱՆԳԱՐԱՆԸ»

«Շրջուն բառարանը» կամ «Հանգարառարանը» չի պատկանում լայն ճանաչում գտած ուղղագրական, բացատրական երկլեզվյան կամ մի քանի լեզվյան բառարանների թվին:

Վերջին տասնամյակում Սովետական Միությանում և նրա սահմաններից գուրս լույս են տեսել մի քանի հանգարառարաններ, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ այս կամ այն լեզվի բառացանկը, որտեղ բառերը դասավորված են այբբենական կարգով՝ սկսած բառավերջի հնչյունից:

Նման դասավորության հետևանքով իրարից հետո են դասավորվում բոլոր այն բառերը, որոնք ունեն նույն վերջավորությունը:

1904 թ. սկսած նման բառարաններ լույս են տեսնում լատիներենի, հունարենի, թուրքերենի, հին սլավոներենի համար:

Բազմապիսի ու հարուստ բառական նյութ են տալիս ընթերցողին ռուսերենի հանգարառարանները, որոնցից առաջինը լույս է տեսել 1957—1958 թթ. Բեռլին—Վիսրադենում Ռ. Գրեկի և Բ. Կրյոշեի հեղինակությամբ, իսկ երկրորդը՝ 1958 թ. Բեռլինում, Տ. Լ. Բիլֆելդտի խմբագրությամբ:

Այդ հանգարառարաններից առաջինի առաջին հատորը ամփոփում է մոտ 142, իսկ երկրորդ բառարանը՝ 80 հազար բառ: Առաջինի բառացանկը կազմողները օգտագործել են Վ. Ի. Դալի բառարանը, Դ. Ն. Ուշակովի խմբագրությանը լույս տեսած բառարանը և մի շարք այլ տերմինաբանական բառարաններ: Երկրորդի հիմքում ընկած են Դ. Ն. Ուշակովի խմբագրությանը լույս տեսած բառարանը, Ս. Ի. Օժեգովի և «Ուղղագրական» բառարանները:

Տարբեր սկզբունքներով կազմած այս բառացանկերը, հատկապես վերջինը, Ֆերուսյուններով հանդերձ, ընդունելություն գտան և լայն կերպով օգտագործվում են:

Ներկայումս ռուսերենի նման բառացանկերի հրատարակման աշխատանքները կենտրոնացված են Լենինգրադի և Մոսկվայի ռուսաց լեզվի ինստիտուտների բառարանագրական սեկտորներում:

Աշխարհում առաջին «Հանգարառարանը» լույս է տեսել հայերեն, այն իր տեսակի մեջ միակն է, ամփոփում է գրարարի, միջին հայե-

րենի և աշխարհարարի մոտ 37 ու կես հազար բառ: Ինքնին հասկանալի է, որ այս «Հանգարանը» չի կարող բավարարել այսօրվա լեզվաբանության պահանջները հենց թեկուզ միայն այն պատճառով, որ լույս է տեսել գրեթե մեկ հարյուրամյակ առաջ: Այս «Հանգարանը» հայտառ հազվագյուտ գրքերի թվին է պատկանում: Նրա մասին գեթ մի փոքր պատկերացում կազմելու համար տալիս ենք մի լջ ա-ով վերջացող բառերից.

Ա		
բա	ալելուիա	տիսա
սարա	սալա	
դա	կեփալա	փեննտ
սագա	քալա	ռօշնա
պղակուհա	նաղլա	աղովնա
կասդա	կա	ախուհա
գոնեա	հաղիկա	ապա
մարասաթա	մակա	հապա
գութա	թանկա	յապա
լիրիա	նուրկա	մա
լուրիա	տա	տարա
պիթրա	տահա	որդոստա
թեւելիա	ակրկահա	որդոստա
քիմիա	էհա	օգոստա
ալքիմիա	նահա	ամատտարա
պերիարմինիա	բամա	սնավարա
	նա	հիդրա
մեսիա	զինա	նեբա
		հեբա

Մեզ հասած տեղեկությունների համաձայն, այս առաջին «Հանգարանից» մի քանի տարի առաջ լույս է տեսնում մեկ այլ «Թերզյանի հեղինակությամբ, սակայն, ցավոք, այդ մասին մենք որևէ խոսք ասել չենք կարող, այն ոչ մի տեղ չհայտնաբերելու և տեսած չլինելու պատճառով:

1 «Հանգարան կամ բառագիրք յանգանց Հայկազեան լեզուի», խմբ. Վ. Գալֆայան, Թեոդոսիա, ի տպարանի Խալիպյան ուսումնարանի, 1862—1864, Թեոդոսիա, [15 փետրվարի, 1862, Գաբրիել Այվազյան Վ.]:

Այնուհետև, բավական երկար ժամանակ, հայատառ հանգարառարանների շնորհակալությամբ և միայն 1961 թ. նման մի բան հրատարակվում է Բեյրութում, Խաշիկ Աթանասյանի հեղինակությամբ:

Նպատակից դուրս համարելով սույն աշխատության մանրամասն նկարագրությունը, նշենք, որ թեև հեղինակը այն կոչում է հանդարան և, իբրև հայ լեզվի թանգարան, հավաստում է նրա պիտանիությունը «մեր բոլոր ազգայինների համար», բայց այն հեռու է այդպիսին լինելուց: Միասնական ելակետի և սկզբունքի պակասը սույն աշխատությունը դարձնում է, թեև իր տեսակի մեջ եզակի, բայց այս կամ այն որոշակի նպատակով օգտագործելու համար գրեթե անմատչելի:

Այս բառացանկ-բառարանում, ինչպես նշված է աշխատության առաջարանում, զետեղված են հանգ կազմող ոչ միայն բառեր, այլև արմատներ, մասնիկներ, ինչպես՝ զազմ, բազմ, կազմ և այլն: Արմատներին և մասնիկներին կցված են «բառակազմական ծանոթություններ», որոնք օտարոտի են հանգարառարանի համար: Որոշ բառերի դիմաց տրված են նրանց հոմանիշները՝ «հանված աշխարհարար և գրարար երկերից», զանազան իմաստները, զանազան ասացվածքներ և ոճեր. տրված են բառերի «ընտանիքներ», այսինքն որոշակի ածանցներով կազմված բառերը: Այս վերջին նպատակով, ինչպես վկայում է հեղինակը, օգտագործված է պրոֆ. Աճառյանի «Արմատական բառարան»: Սույն «Հանգարան-թանգարանի» մասին քիչ թե շատ պատկերացում տալու նպատակով բերենք մի փոքր հատված.

Եզ.

Նա լծորդ է եզի, եփի, եփի:
աւելզ արև, ութերորդ ամիս հայոց. բազ. բառ. արեգդմ արեգգեր. արեգակ

Հնգ վանկ, կապ, հնչյուն գրելու, ած. բառ. հեզարան:

Հնգ(նել) ծաղրել, այպանել, անարգել ած. բառ. հեզական. հեզնորեն. հեզնութիւն. հեզնարար.

Եզ.

Եզ(հ) կոլու մալուած արու.—փոքր ընչող, մոզի. ած. բառ. եզնիկ (յատուկ անուն մարդու). բազ. բառ. եզնամուլ (եզներու զույգ). եզնարած. եզնարաղջ (չափազանց անոթութիւն). եզնակ (փոքր եզ):

2 Խ. Աթանասյան, Հանգարան ու թանգարան հայոց լեզվի, Բեյրութ, Հայ կաթողիկէ տպարան, 1961:

Եզ—մեկ, միակ: Արմատ, առանձին անդործածական, ած. բառ. եզակի. եզական (անման մեկ հատիկ, չքնաղ, շնաշխարհիկ):

Եւհեւ ազնիվ ու նուրբ կերպաս ած. բառ. բեհեզայ:

Եզ(ուլ) կամ լիզ(ուլ) լզել. լեզուով լափել, մաքրել. հաճախակի—լզուրուտել բազ. պնակալեզ:

ձեզ հայց. հուլով դուք-ի

սեզ հայց. հուլով մենք-ի

ֆեզ հայց. հուլով դու-ի:

Վերոհիշյալ հատվածից պարզ երևում է, որ բառերի վերջից սկսած այբբենական կարգով դասավորված այս աշխատության մեջ միաժամանակ տրված են այնպիսի տեղեկություններ, որոնք դուրս են հանգարառարանների նպատակներից:

Անկախ այդ ամենից, նույնիսկ միասնական սկզբունքով կատարյալ հանգարառարան լինելու դեպքում էլ այս աշխատանքը չի կարող ծառայել որպես ժամանակակից գրական լեզվի լրիվ բառացանկ ու հանգարառարան, մինչդեռ ժամանակակից գրական հայերենի բառացանկի, ինչպես և հանգարառարանի հրատարակումը հրատապ գործ է, մանավանդ որ մենք մինչև այժմ հրատարակված չունենք մեր լեզվի նորաշունչ մի բառարան կամ նորմատիվ բառացանկ:

Հայոց լեզուն աշխարհի լավ ուսումնասիրված լեզուներից է, հայ բառարանագրությունը չափազանց զարգացած է և գովելի ավանդներ ունի, սակայն գիտության նոր ճյուղերի, հատկապես կիրառական տեղեկության զարգացման հանգամանքը առաջ է բերել նրա ձևական-կառուցվածքային ուսումնասիրության, հետևապես և հանգարառարաններ հրատարակելու անհրաժեշտությունը: Հայերենի շրջուն բառացանկը հնարավորություն կտա լրիվ պատկերացում կազմելու ժամանակակից գրական հայերենի բառերի ձևային առանձնահատկությունների մասին, հեշտությամբ որոշելու ածանցման բնույթը: Հանգարառարանը հնարավոր կդարձնի հեշտությամբ անջատել բարդ բառերի ձևական բաղադրիչները: Այն մեծ դեր կխաղա ֆորմալ բառակազմության մեջ՝ ձևույթները անջատելու, և սահմանելու համար թե ի՞նչ է արմատը, ի՞նչ է ածանցը ըստ ձևական-կառուցվածքային լեզվարանության: Մինչև այսօր նման ուսումնասիրություններ գրեթե չեն կատարվում հանգարառարանների բացակայության պատճառով: Հանգարառարանը հնարավոր է դարձնում խմբավորել իրար հետ առնչվող և փոխադարձ կապ ունեցող բառակազմական ածանցներով կազմված բառերը և տալ դրանց

տեսությունը, ճշգրտությամբ որոշելու բառակազմության ուսումնասիրության սահմանները, հոլովման ու խոնարհման սխտեմայնությունը, լրիվ չափով դասակարգելու այդ բնագավառների օրինաչափություններն ու շեղումներն:

Ածանցների բերականական բնույթը ճշգրտելու, նրանց համանունությունները հետազոտելու համար ևս անհրաժեշտ է ածանցների սխտեմավորված դասավորությունը:

Նմանօրինակ բառացանկը անհրաժեշտ է հայագիտության, հայերենի փորձառական (էքսպերիմենտալ) հնչյունաբանության համար մի շարք տեսակետներից: Այն մեծապես օգտակար կարող է լինել և հնչույթաբանության (ֆոնոլոգիայի) համար, քանի որ ժամանակակից հնչույթաբանության կարևոր խնդիրներից է նաև որոշել, թե ի՞նչ հնչույթներով և հնչյունների խնչպիսի կապակցություններով կարող են վերջավորվել բառերն ու բառաձևերը: Այդպիսի մի քսուսացանկի՝ «Հանդարառարանի» բացակայության դեպքում անհրաժեշտ էր երկարատև աշխատանք հենց միայն նրա համար, որ բառաքանները դուրս գրվեին ու առանձնացվեին բառերը ըստ վերջավորությունների:

Ինքնին հասկանալի է, որ նման բառացանկը առավել օգտակար կարող է լինել կցական լեզուների, ուրեմն և հայերենի ձևական-կառուցվածքային ուսումնասիրության համար:

Նման բառացանկը չափազանց մեծ անհրաժեշտություն և կարևորություն է ներկայացնում մերենական թարգմանության համար: Մերենական թարգմանության աշխատանքների տեսական բարձր մակարդակն ու առավել ճշգրտությունն ապահովելն անհնար է, եթե ձևերի տակ չունենանք շրջուն բառացանկ: Այդ անհրաժեշտ է հատկապես այն լեզվի ձևաբանական վերլուծության համար, որից կատարվում է թարգմանությունը, բայց հանգարառարանը անհրաժեշտ է նաև այն լեզվի ձևաբանական սինթեզի համար, որով կատարվում է թարգմանությունը:

Մերենական թարգմանության ու մաթեմատիկական լեզվաբանության աշխատանքների ընթացքում ևս բառերը բաժանվում են բաղկացուցիչ մասերի՝ հիմքի, արմատի և վերջավորության: Այս բաժանումը հիմնականում տարբերվում է տրադիցիոն բերականության մեջ ընդունված բաժանումից, և ելնում է բառերի գուտ ձևական-կառուցվածքային հատկանիշներից:

Մերենական թարգմանության ժամանակ հատուկ նշանակություն է ստանում բառի ածանցյալին մասի (ածանցի) ձևական որոշումը, ուստի և լեզվի, տվյալ դեպքում՝ հայերենի ածանցների սխտեմավորման ենթարկված ողջ ցանկը

հնարավորություն կտա որոշել ածանցը բառից առջատելու օրինաչափությունները՝ ալգորիթմները, որոնք անհրաժեշտ են բարձրորակ թարգմանություն կատարելու համար:

Շնորհիվ այն բանի, որ հանգարառարանում այրենական կարգը սկսվում է բառի վերջից, ապա այս կամ այն բառի անփոփոխ, նվազագույն մասը իսկույն աչքի է ընկնում և հեշտությամբ որոշվում է, թե տվյալ բառը ձևական ինչ խմբի է պատկանում: Պարզ է դառնում նաև նրա վիճակագրությունը՝ բառի «շահավետ» կամ «անշահավետ» լինելը, այսինքն այն հարցը, թե ի՞նչ քանակությամբ բարդ բառերի կազմության մեջ է մտնում տվյալ անփոփոխ արմատը: Այնուհետև տվյալ լեզվի բերականության հիման վրա կազմվում են բառերի հոլովման և խոնարհման լիակատար ու մանրամասն աղյուսակները և տրվում է լեզվի ձևական-կառուցվածքային նկարագրությունը:

Անհրաժեշտ է նշել, որ այս կամ այն լեզվի ամենամանրամասն բերականությունն անգամ չի կարող բավարարել մերենական թարգմանության ի այդ ընթացքում կատարվող՝ տեքստերի անալիզի և սինթեզի աշխատանքներին: Բերենք մի այսպիսի օրինակ. ուսերենի ակադեմիական բերականության մեջ նշվում է ուսերենի 3 տիպի հոլովում՝ իրենց բացառություններով, նման բաժանումը բնավ կիրառելի չէ մերենական թարգմանության համար հենց թեկուզ միայն այն պատճառով, որ այդ երեք խմբից յուրաքանչյուրի մեջ, ձևական-կառուցվածքային սեսակետից մոտենալով, մտնում են միանգամայն տարբեր բառեր:

Ի.ուսերենի շրջուն բառացանկի օգնությամբ կատարված վերլուծական աշխատանքները ցույց են տալիս, որ անջատվում են գոյականների հոլովման 400-ից ավելի և բայի խոնարհման մոտ 120 ձևեր: Հասկանալի լինելու համար մի կոնկրետ օրինակ բերենք հայերենից:

Հայերենի ավանդական բերականության մեջ ընդունված է 8 հոլովում և հայտնի է, որ նույն հոլովման պատկանող տարբեր բառեր, մերենական թարգմանության համար կատարված բաժանման ժամանակ, կարող են մտնել այլ խմբերի մեջ, որովհետև եթե ավանդական բերականության մեջ հաշվի են առնվում բառերի հոլովիչները, հոլովման վերափոխությունները, հոլովվելու նրանց հիմնական հատկանիշները, ապա մերենական թարգմանության ժամանակ հաշվի են առնվում ամեն մի հոլովի ժամանակ բառի կրած բոլոր փոփոխությունները անխտիր:

Այսպես, համաձայն հայերենի ավանդական բերականության անհ, ենհ, ոնհ վերջածանցներով վերջացող բառերը նույն ց հոլովման մեջ են մտնում, մինչդեռ մերենական թարգմանու-

թյան նպատակներով կատարված բաժանումը այսպիսի բառերը դասում է տարբեր հոլովական խմբերի մեջ, որովհետև մյուս հոլովներում թեև վերջից նրանք ունեն օ, բայց ց-ը սեռական հոլովում նախորդում են մի դեպքում աւն(ց), մի այլ դեպքում նն(ց), երրորդ դեպքում ու(ց)-ը: Այսպես էլ մյուս հոլովների դեպքում, իսկ այդ շափազանց կարևոր է, որովհետև մեքենային պետք է տրվի առավելագույն ճշգրիտ ինֆորմացիաներ, «արսիոմաներ»: Այստեղից էլ հանգարառարանի մի այլ կարևորությունը և անհրաժեշտությունը: Այն պետք է բնկնի լեզուն արսիոմավորելու, ինչպես նաև ալգորիթմների աշխատանքների հիմքում:

Սակայն սրանով չի սպառվում շրջուն բառացանկի նշանակությունը: Այն սեղանի գիրք կարող է լինել բոլոր նրանց համար, ովքեր բղրաղվում են հայերենագիտությամբ, հայոց լեզմի, նրա բառակազմության օրինաչափությունների ուսումնասիրությամբ: Այն մեծ անհրաժեշտություն կլինի ուսուցիչների, հայոց լեզուն սովորողների համար: Բանաստեղծական լեզվի համար կարևոր նշանակություն ունի բառավերջը, քանի որ հանգարառարանում բառերը դասավորված են ըստ վերջավորությունների, ուստի և այն կարող է օգտագործվել նաև տաղաչափության և այդ բնագավառին վերաբերող ուսումնասիրությունների համար: Կասկածից վեր է սակայն, որ այն պիտանի ու անհրաժեշտ կարող է լինել և այլ աշխատանքների ժամանակ, որոնց մասին այստեղ խոսք չեղավ:

Այս ամենը նկատի ունենալով ՀՍՍՌ ԳԱ և Երևանի Պետական համալսարանի հաշվողական կենտրոնի մաթեմատիկական լեզվաբանության և մեքենական թարգմանության խումբը (այժմ լարորատորիա) 1961 թ. վերջերից սկսել էր հայոց լեզվի հանգարառարանը կազմելու աշխատանքները: 1962 թ. կեսերին կազմված ու շրջուն այրերենական կարգով դասավորված էր շուրջ 35 հազար բառ: Մեքենական թարգմանության աշխատանքները ավելի ծավալելու առնչությամբ հարկ եղավ ընդարձակել բառացանկը և 1962 թ. հունիսից նոր թափով առաջ տարվեցին աշխատանքները:

Այս կամ այն լեզվի հանգարառարան կազմել նշանակում է ուղղակի վերցնել պատրաստի սի բառացանկ կամ բառարան և շրջելու Ուստի և հանգարառարան կազմելու գործը համեմատաբար դյուրին է այն լեզուների համար, որոնք պատրաստի ունեն իրենց լեզվի բառացանկը, բայց քանի որ մենք չունենք հայերենի լրիվ բառացանկը, ապա աշխատանքները սկսել ենք բառեր հավաքելուց և բառացանկ կազմելուց՝ հետադարձում այն շրջուն այբբենական կարգով,

որպես «Հանգարառարան» հրատարակելու նպատակով: Սակայն կատարված մեծածավալ աշխատանքի արդյունքները ամբողջովին հրապարակ հանելու նպատակով որոշվել է տպագրության հանձնել ոչ միայն շրջուն բառացանկը՝ «Հանգարառարանը», այլև ժամանակակից հայոց լեզվի բառացանկի ուղիղ այրերենական կարգով դասավորված օրինակը:

Հիմք բնգունելով Ստ. Մալխասյանցի քառահատոր բացատրական բառարանը, միաժամանակ, համաձայն հանգարառարանի սկզբունքների, հավարել ու քարտագրել ենք բառեր բոլոր տպագիր բառարաններից: Բացի դրանից մեծ աշխատանք է կատարվել ողջ հայ գրականության (դասակառուցից սկսած մինչև մեր օրերը) աշխի բնկնող ստեղծագործություններից բնտրվի բառացանկեր կազմելու ուղղությամբ: Ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից գրականությունից բառեր բնտրելիս հիմնական ծանրությունը դրել ենք հեղինակային լեզվի վրա: Բառացանկը կազմելիս մեծ քանակությամբ բառեր են բնագրվել ժամանակակից հայ պարերական մամուլից: Այն լրացնելու նպատակով լգտագործվել է նաև ՀՍՍՌ ԳԱ լեզվի ինստիտուտի քարտարանը: Մեր նպատակն է եղել կազմել ժամանակակից հայերենի՝ որքան հնարավոր է լրիվ բառացանկը, հետագայում այն շրջելու նպատակով: Զգտելով բառացանկը, ինչպես նաև «Հանգարառարանը» հարստացնել որքան հնարավոր է շատ աղբյուրներից՝ կազմողները հանդես են բերել զգուշավորություն և խուսափել են այն «աղբյուր» արհեստական կազմություններով, արխաիզմներով, նեղ բարբառային և այլ բառերով: Սակայն, ինքնին հասկանալի է, որ ձգտել մի նպատակի չի նշանակում հասնել դրան, ուստի և պարզ է, որ նման մեծածավալ «Բառացանկը» և «Հանգարառարանը» (մոտ 120 հազար բառ), որ հայ իրականության մեջ հրատարակվելու է առաջին անգամ, չի կարող բնագրվել մեր ողջ գրական լեզվի բառապաշարը, մասնագիտական տերմինները, մանավանդ որ մենք ողջ այս աշխատանքների ընթացքում չենք ունեցել նման բառացանկին, առաջադրվող նվազագույն պահանջները բավարարող որեւէ մի այլ բառացանկի օրինակ:

Ժամանակակից հայերենի «Բառացանկի» և «Հանգարառարանի» նպատակն է բնագրվել հայ գրական լեզվի բոլոր բառերը՝ XIX դարի 70-ական թթ. սկսած մինչև մեր օրերը, այն բառերը, որոնք օգտագործվել են առանձին հեղինակների կողմից, մեր լեզվում լայն տարածում չեն գտել, բայց հարազատ են հայերենի բառակազմական օրինաչափություններին. բարբառային այն բառերը, որոնք կորցրել են այդ

երանգն ու նշանակությունը, մտել են գրական լեզվի բառադանձր. այն բառերը, որոնք չունեն նեո բարբառային նշանակություն, գործ են ածվում շատ բարբառներում. այլև նրանք, որոնք չունեն գրական համարժեքներ, կամ գրական համարժեքներ ունենալով հանդերձ հավասարապես գործածական են: Բացի դրանից ամփոփվելու են բարբառային այն բառերը, որոնք առանձին վերցրած գործածական չեն, բայց մտնում են հայոց բառ ու բանի, առած-ասացվածքների կազմության մեջ: «Բառացանկի» ու «Հանգարառարանի» մեջ են մտնելու այն օտար բառերը, որոնք չունեն գրական հայերեն համարժեքներ, ինչպես և՛ թեև ունեն գրական համարժեքներ, բայց լայնորեն օգտագործվում են դրական, մասնագիտական գրականության մեջ, այդպես էլ այն բառերը, որոնց համարժեքները չկան գրական հայերենում, իսկ եթե կան էլ, անգործածական են և անհասկանալի, և այնպիսիք, որոնք մի նոր և այլ նրանց ունեն, քան նրանց հայերեն համարժեքները: «Բառացանկի» և «Հանգարառարանի» մեջ մեծ տեղ է տրված գիտա-տեխնիկական, արտադրական տերմիններին, ընդգրկված են մասնագիտական այն բառերը, որոնք կիրառվում են ժամանակակից գիտա-մասնագիտական հանրամատչելի գրականության մեջ, մամուլում և դպրոցներում: Տրվում են ՍՍՌԽ ժողովուրդների պաշտոնական անունները, էթնիկական հանրածանոթ անվանումները, ինչպես նաև՝ թեև այժմ անհայտացած, բայց պատմության մեջ դեր կատարած ժողովուրդների և ցեղերի անունները:

«Բառացանկի» և «Հանգարառարանի» մեջ ընդգրկվող բառերի կարգերի մասին մանրամասն խոսվում է այդ աշխատությունների կազմման սկզբունքներին վերաբերող բաժնում, սակայն այստեղ այդ մասին խոսքն ավարտելուց առաջ նշենք և այն, որ աշխատանքների մեջ մեծ ընդգրկմամբ տրվում են նաև տառային, վանկային, վանկա-տառային, վանկա-բա-

ռային այն հապավումները, որոնք տարածված են և լեզվում սովորական են: Այնպես թե՛ «Հանգարառարանի» հիմնական նպատակից՝ առավել ուշադրություն ենք դարձրել ածանցավոր, հատկապես վերջածանցավոր բառերը լայն մասշտաբով ընդգրկելու հանգամանքի վրա, սակայն հայերենի բառակազմական, ածանցման անսահմանափակ հնարավորություններին ծանոթ մամն ոք կարող է հավաստել, որ բոլոր ածանցներով կազմվող բոլոր բառերը զետեղելու դեպքում «Հանգարառարանի» անշուշտ կծանրարենվեր, ուստի և այս դեպքում աշխատել ենք որոշակի սահմանափակումներ կիրառել խիստ մտածված նպատակահարմարությունից ելնելով: Օրինակ, ընդգրկված են ան նախածանցով այն բառերը, որոնք լոկ ժխտում չեն արտահայտում, այլ ինքնուրույն բառային սրժեր ունեն նրանք, որոնց կազմի մեջ մտնող բառերը առանց ան նախածանցի չեն գործածվում, կամ՝ որոնք կազմված են անհնչյունափոխ արմատներից: Նման սահմանափակումներ են մտցված և այլն, ական, նման, պես վերջածանցներով կազմված բառերի նկատմամբ:

«Հանգարառարանում» բառերը օժտված են լինելու քերականական հետևյալ նմուշներով. նշվելու է բառի՝ խոսքի ինչ մաս լինելը, երբ առկա է խոսքի մասային երկակիությունը, որ հոլովման կամ խոնարհման պատկանելը և այլն:

«Հանգարառարանի» ուղղագրության հիմքում ընկած են ժամանակակից հայերենի ուղղագրության նորմաները և ՀՍՍՌ մինիստրների սովետին առընթեր տերմինաբանական կոմիտեի որոշումները:

Ժամանակակից հայոց լեզվի «Բառացանկը» և «Հանգարառարանը» կազմելիս ուսումնասիրվել են մինչև այս հրատարակված բառացանկերը, հայերեն և այլ լեզուներով շրջան բառարանները, հաշվի են առնված նրանց գրական և բացասական կողմերը:

Ս. ԲԱՂԴԱՍՐՅԱՆ

ОБЗОР ДОКУМЕНТАЛЬНЫХ МАТЕРИАЛОВ ЦЕНТРАЛЬНОГО ГОСУДАРСТВЕННОГО ИСТОРИЧЕСКОГО АРХИВА СССР ПО ИСТОРИИ АРМЕНИИ

Целью настоящего обзора является раскрытие состава и содержания документальных материалов Центрального государственного исторического архива СССР (в Ленинграде) по истории Армении с тем, чтобы помочь исследователям ориентироваться в них.

Документы по истории Армении содержатся в фондах высших органов государ-

ственной власти (Комитет и Совет министров, Кавказский комитет) и различных ведомств: Министерства внутренних дел (Совет министра внутренних дел, Департамент полиции исполнительной, Центральный статистический комитет, Земский отдел, Департамент духовных дел иностранных исповеданий), Министерства финансов (Общая канцелярия министра финансов, Департа-